

Manoogian Simone Research Fund (MSRF)

Թեմա. Տնտեսական շահութաբերության ներքին դրույքի (ՏՇՆԳ, EIRR) հաշվարկման մեթոդաբանություն տրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման ոլորտում իրականացվող ծրագրերի համար

1. Հիմնախնդրի նկարագրությունն ու դրա արդիականությունը

Տրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման ոլորտում տնտեսական շահութաբերության ներքին դրույքն օգտագործվելու է որպես ելակետային ցուցանիշ հանրային ներդրումային ծրագրերի, ինչպես նաև վերոգրյալ ոլորտում ներդրումների արդյունավետությունը գնահատելու համար:

2. Հետազոտության նպատակը և դրա հնարավոր ազդեցությունը համապատասխան քաղաքականության մշակման վրա

Հետազոտության շրջանակներում անհրաժեշտ է մշակել տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտում տնտեսական շահութաբերության ներքին դրույքի գնահատում՝ ներդնելով Հայաստանի Հանրապետությունում կիրառելի մեթոդաբանություն:

Ակնկալվող արդյունքը

Առաջադրանք 1. Միջազգային փորձի ուսումնասիրություն

Համադրելի երկրների փորձի ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտ է վեր հանել տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտում ներդրումների տնտեսական շահութաբերության ներքին դրույքի գնահատման կիրառվող մեթոդաբանությունները:

Առաջադրանք 2. Կիրառելիությունը Հայաստանի Հանրապետության համար

Միջազգային փորձի և տվյալների վերլուծության արդյունքներով անհրաժեշտ է առաջարկել Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտում ներդրումների տնտեսական շահութաբերության ներքին դրույքի հաշվարկման մեթոդաբանություն:

Manoogian Simone Research Fund (MSRF)

3. Հետազոտության մեջ ուսումնասիրվելիք կոնկրետ խնդիրներն ու հարցադրումները

- տրանսպորտային ենթակառուցվածքների շինարարության ոլորտում հանրային ներդրումային նախագծերի գնահատման և EIRR-ի կիրառման միջազգային փորձի ուսումնասիրություն,
- (EIRR) հաշվարկման համար անհրաժեշտ փոփոխականների ընտրություն և մոդել,
- անհայտ փոփոխականների գնահատում և դրանց կիրառում հանրային ներդրումային ծրագրերի օրինակով:

4. Հետազոտությունից ակնկալվող արդյունքը

- տրանսպորտային ենթակառուցվածքների շինարարության ոլորտում EIRR-ի հաշվարկման համար բացակայող փոփոխականների նույնականացում և գնահատում,
- առաջարկություններ վերոնշյալ ոլորտում EIRR-ի հաշվարկման համար: